№ 153 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՅՈՒԼԻՍԻ № 153

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

1) Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի համար մի համապատասխան ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց լեզուի, գրականութեան և պատմութեան համար, շաբաթական 23 դասով և տարեկան 1700 ռուբլի ռոճիկով։

2) Հռիփսիմեան օրիորդաց և Մեսրոպեան տղայոց դպրոցների համար մի մասնագէտ նկարչութեան ՈՒՍՈՒՑԻՉ, շաբաթական 26 դաս. դասագինն է 60 ր.։

Ցանկացողները դիմումի հետ պիտի ներկայացնեն նաև իրանց վկայականները կամ նրանց վաւերացրած պատճէնները դպրոցների հոգաբարձութեանը մինչև օգոստոսի 15-ը հետևեալ հասցէով՝ Баку, Попечительству Армянскихъ школъ. Гимназическ. ул. д. Армянск. Человѣколюб. О-ва.
տռ. (օ. մ.) 467. 3—2

«ՄՇԱԿԻ» ԳՐԱՏԵՆԵԱԿՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ կազմած

ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶԸ

փոքրադիր։ Հատը 5 կոպէկ։ Ճանապարհածախքով հատը 8 կ.։ Գումարով գնողներին զեղչ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ. ՈՒՊՐԱՎԱՅԻՑ

Քաղաքում ստամոքսա-աղիքային հիւանդութիւնները զարգանալու պատճառով, անպայմանօրէն առաջարկվում է՝

1) ՉԸ ԽՄԵԼ ՀՈՒՄ ՋՈՒՐ, այլ խմել եռացրած կամ զտված ջուր։

2) Թարմ մրգեր ուտելուց առաջ՝ լուանալ նրանց եռացրած կամ զտված ջրով։ Չը հասած պտուղներ չուտել։

3) Սանիտարական կանոնների խախտման կամ կասկածելի հիւանդութիւններ նկատելու դէպքում իսկոյն և եթ յայտնել Ուպրավային, կամ թէ՝ քաղաքային սանիտարական կամ Թաղական բժիշկներից մէկն ու մէկին և կամ ոստիկանութեան։

4) Նախազգուշութեան և անձնական անվտանգութեան ամեն միջոց ձեռք առնել, համաձայն հրատարակված հրահանգի, որ փակցված և ցրված է քաղաքում (բրօշիւրները տրվում են Ուպրավայում)։
տռ. 474. 1—1

Ընկերակցութիւն „Բ. Լ. ԲԼՕՑԷԿ և Ընկ."

(Նաւթլուղ, Պրիբրեժնայա № 1, զինուորական հիւանդանոցի մօտ)։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԱՌՈՅՑ,

որ պատրաստված է բացառապէս ջրմուղու ջրից։ տռ. 470. 2—1

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, հինգշաբթի, յուլիսի 16-ին Հայոց Դրամատ. Դերասանների Ընկերակցութիւնը
կը ներկայացնէ

I
ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՁԱՅՆԵՐ
Դրամա 1 գործողութեամբ։

II
ՉԱՐԱՃՃԻ կոմ. 3 գործողութեամբ։

Սկիզբը երեկ. ժամը 8½-ին։
Տոմսակները՝ 1 ռ. մինչև 30 կ.։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ Կլուբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները՝ 25-ական կոպէկ։
473. 1—1

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախկ. օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստ. պրոֆ. Պօզնէրի։

Նախկին տարիների նման կընդունէ հիւանդներին մայիսի 1-ից Կովկասի հանքային ջրերում՝ Պեատիգորսկում, Ելիզավէտինսկայա փողոց, տուն Արխիպովի, ռուսաց սօբօրի դիմաց, տելեֆ. № 276։

տռ. (և. հ. կ.) 248. 30—30

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԱՏՈՐՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև ծովում մեր ականաւերը ռմբակոծեցին նաւահանգստային շէնքերը Սամսոնում, Ունիէում ու Րիզէում և Անատոլիայի ափերի մօտ ոչնչացրին աւելի քան 150 առագաստանաւ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 յուլիսի

ՍՕԼՈՒՆ.— Միտիլէն կղզուց հաղորդում են յուլիսի 12-ից.

Մուդրոսում ափ իջան երկու մեծ շոգենաւով 10,000 զինւոր, որոնք ուղարկվելու են Գալլիպօլի թերակղզին ամեն անգամ 200-ական մարդ, որպէսզի մարդկային խոշոր կորուստներ չը լինեն գերմանական սուզանաւերի յարձակման դէպքում։

ԱԹԷՆՔ.—Թիւրքերը, կորցնելով երկու շարք խրամատ, հիմնում են 4 նոր շարք խրամատներ Կրիտիայի և Աչիբաբա զօրանոցակատի վրա՝ լցված զօրքին օգնելու նպատակով այն պարտութիւնից յետոյ, երբ Էնվեր-փաշան, որ փոխարինել էր վիրաւորված Սանդէրսին, առաջխաղացման դիմեց դաշնակիցների դէմ։

Ասիական ափի մարտկոցները ոչնչացնելու նպատակով, որոնք խանգարում են դաշնակիցների առաջխաղացմանը Աչիբաբայի շրջանում, դաշնակից նաւատորմը արդէն երեք օր է ռմբակոծում է նեղուցների ամրութիւնները։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Կ. Պոլսից հաղորդում են, որ մայրաքաղաքում գտնվող բոլոր զօրքերը, նաև ոստիկաններն ուղարկվել են Դարդանէլ. ոստիկանական պարտականութիւնները կատարում են պահեստի հասակաւոր զինւորները՝ զինված որսորդական հրացաններով։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Գերմանիայի խոստացած շուտափոյթ օգնութեան առիթով, ֆօն-դեր-Գոլց-փաշան նոր օգնութիւն է պահանջել Դարդանէլի համար, ուր փոխադրվում են զօրքերի մի մասը Սև ծովի ափերից։ Այդ զօրքերն ամեն օր անցնում են Կ. Պոլսի փողոցներով։ Զինւորները լաւ են զինված, բայց շատ քայքայված են. շատերն ընկնում են քաղցից ու յոգնածութիւնից։

ԱՆԳԼՕ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 յուլիսի

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների պալատում Հնդկաստանի գործերի ստատս-սեկրետար Չեմբերլէնը յայտնեց, որ Եփրատի ափերում, Սուկ-էշ-Շուէխի և Նազարէայի միջև 20 օր տևող ռազմական գործողութիւններն աւարտվեցին աջողակ։

Մեծ-բրիտանական զօրքերը յուլիսի 11-ին յարձակում գործեցին թշնամու վրա և ձեռք ձգեցին նրա դիրքերը, չը նայած յուսահատական դիմադրութեան, ըստ որում ռազմանաւերը գիշերով ռմբակոծում էին Նազարէան և ստիպեցին թիւրքերին նահանջել անկարգ՝ հիւսիսային ուղղութեամբ։ Մեծ-բրիտանական զօրքերը գրաւեցին Նազարէան յուլիսի 12-ին, ձեռք ձգելով 11 թնդանօթ, 2 գնդակացիր և գերելով մի քանի հարիւր մարդ։ Թիւրքերը կորցրին սպանված 500 մարդ, բացի դրանից գերվել են շատերը, որոնց թիւը դեռ պարզված չէ։ Մեծ-բրիտանական զօրքերը, կռւելով մեծ քաջութեամբ, կորցրին սպանված և վիրաւոր 300—400 մարդ։ Նրանք յարձակումներ էին գործում անտանելի շոգի մէջ և ամենածանր պայմաններում, որովհետև ամբողջ տարածութիւնը ծածկված էր ճահիճներով։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 յուլիսի

ՍՕԼՈՒՆ.—Աւելի քան 1800 յոյներ գտնվում են ներկայումս Զմիւռնիայի բանտերում։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են յուլիսի 7-ից, որ թիւրքական փամփուշտների երկու գործարանների բոլոր ջանքերը՝ աւելացնելու ռազմամթերքների ու փամփուշտների արտադրութիւնը՝ չնչին են համեմատած միայն Դարդանէլի պահանջների հետ։ Թիւրքերը յոյս ունեն ռազմամթերք ստանալու Գերմանիայից։ Իշխան Հօհենլօէի գալուստը նոյնպէս բացատրվում է թիւրքաց շրջաններում իբրև առանձին միսսիա բալկանական երկիրներում։

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսից հեռագրում են, որ գահաժառանգ պրինց Իզզէդդինը գեներալշտաբի մեծ թւով օֆիցէրների ուղեկցութեամբ մեկնել է պատերազմաբեմը։

Թիւրքերը սպառնում են աքսորել տեղաբնական պատրիարքին երկրի խորքը։ Այդ սպառնալիքը այստեղ գործում է շատ ուժեղ տպաւորութիւն։

—

(Լրագիրներից)

◆ «Р. В.»-ին հեռագրում են Հռոմից, որ Իտալիան իր պատրաստութիւնները Թիւրքիայի դէմ պատերազմելու համար արդէն վերջացրել է։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ Կ. Պոլսում կայացաւ երիտասարդ թիւրքերի կոմիտէի արտակարգ նիստը։ Քննվեցին իշխ. Հօհենլօէի արած առաջարկութիւնները զիջելու Բուլղարիային Թրակիան մինչև Էնոս-Միդիա գծագիծը։ Որոշվել է շարունակել բանակցութիւնները Բուլղարիայի հետ՝ ժամանակ վաստակելու նպատակով։ Իսկ սկզբունքով այդ տեսակ զիջում ընդունելը անկարելի է։

◆ «Daily Express»-ի թղթակիցը, որին աջողվեց մի քանի օր մնալ Թիւրքիայում, ասում է, որ այնտեղ դեռ երթևեկում են զինւորական գնացքներ։ Բոլոր քաղաքներում և գիւղերում նորակոչ զինւորները կատարում էին զինավարժութիւններ։ Գերմանացի օֆիցէրներ չէին երևում. ինչպէս յետոյ պարզվեց, նրանք այժմ կրում էին թիւրքական համազգեստ։ Սկզբում ամեն մի թիւրք տալով 40 թիւրքական ֆունտ, ազատվում էր զինւորական ծառայութիւնից։ Գերմանացիք պահանջեցին փոխել այդ կանոնը, և ներկայումս զինւորական ծառայութեան ենթակայ են բոլոր թիւրքերը։ Թիւրքիան կարող էր ունենալ մեծ թւով զօրք, բայց նա զէնք ու ռազմամթերք չունի։ Երկաթուղիները պաշտպանող պահակ-զինւորները զինված են հին ձևի հրացաններով։ Նախանձելի չէ նաև թիւրք զօրքի հագուստը։

◆ Վանի շրջանում բացվում է հիւանդանոց։ Բժիշկների և դեղօրայքի մեծ պակասութիւնը դեռ շարունակվում է։

ԿԸ ԼՍԷ՞Ք, ՀԱՅԵՐ

Խարբերդում հայերի ապստամբութեան տեղեկութիւնները ճշդվում են։ Դիարբէքիրից մեկնած թիւրք զօրքերը քարը քարի վրա չեն թողել... և այլն։

Լրագիրներից

Կը լսէ՞ք, հայեր, մեծ ողբանքին ձայնը։ «Ձայն մը կուգայ այս անգամ՝ մեզնէ շատ խորաձիգ», բարբարոսութեան կլափին խորքերէն... սրտէն։

Մէկդի, մէկդի ձգենք, դէն շպրտենք քէնն ու ատելութիւնը, դէն շպրտենք փոքրիկ, փճուն հաշիւները շուտով, որպէսզի կարողանանք լսել հնչող վայրկեանը։

Եկէք, հայե՛ր, ամեն լեզուներ խօսող հայեր, միատեղ հայոց ազատութեան Պրոպատիկէն անցնինք։ Բոլոր դաւանութիւններով ու կուսակցութիւններով միասին, եկէք թաթխուինք այդ փրկութեան աւազանը մէկ հոգիի պէս, որպէսզի բոլորովին անարատ մորթինուս վրայ յաղթապէս զգալի ըլլայ՝ մօտէն ու հեռուէն թրթռացող՝ մեր փրկութեան ահազանգը։

Ա՜հ, կը լսենք այս նոր ձայնը, որ կուգայ...։ Ամբողջ մէկ տարի խոր խորունկ խեղդուելէ վերջ՝ կուգայ ահա։ Միայն Երզրումէն, Վասպուրականէն կամ Տարօնէն չէ ձայնը, այլ շատ խօրունկ, Խարբերդէն լեռնապատուարէն ալ անդիէն... Ծոփաց աշխարհէն է, որ կուգայ, Շահունեաց և Դիարբեքիրի անծայրածիր դաշտերէն է, որ կուգայ այս անգամ հայութեան հոնգիւնը։

Ալ ինչի կը սպասէք. ամէն հայու պատկանած փողի դէզերուն է հարցումս։ Ալ ինչի կը սպասէք. ամէն հայու պատկանած ջիղին և արիւնին է հարցումս։ Ալ ինչի կը սպասէք. ամէն հայու պատկանած սրտին է քաղաքավար հարցումս։ Ալ ինչի կը սպասէք. հայ տաղանդներուն ու գրիչներուն է հարցումս։

Անհատ մը փրկուիլ կուզէ կրիտիկ վայրկեանին՝ ու իր խօրքերէն կը ցնցուի, էութիւնն ամբողջ գործունէութեան մէջ կըլլայ. միտք, սիրտ ուղեղ՝ կառավարող ներհուն կամքին ենթակայ՝ անքուն, անդադար կը գործեն. ու ահա այն ատեն անձը ազատուած է. ապա՝ վէրքեր ունի, որ կը դարմանէ, կը հանգստանայ... Կրկնելու պէտք մնացա՞ծ է, հայ եղբայրներ, որ նոյն կենաց եւ մահու ճգնաժամին ենթակայ ենք ազգովին, որմէ ապրելու համար հարկաւոր են մեզ՝ Վարդանանց օրերուն պէս՝ բոլոր էութիւնով, միահաղոյն յուզում մը, բոլոր մեր շնորհքներով միանալով գործելու ուժեղ կամք մը։

Մուշ, Բիթլիս, Կարին ու Պոլիս ռազմաբեմերուն եռուն, որոնց մէջ ամիսներէ ի վեր մորթուող հայութեան ճիչն ամեն օր կը լսենք գրեթէ, Կիլիկիայի ցաւատանջ լուրերը մերթ ընդ մերթ հասած են այստեղ։ Սակայն Խարբերդի և Տիգրանակերտի նահանգներուն բարդաւաճ հայութեան՝ ցարդ ճիչը, որ չէինք կրցած լսել ինչպէս, ահա շաբթուս սկսաւ տակաւ իմանալի դառնալ։

Համեստութեան դէմ կըլլար՝ մէջ բերել մեր այն տողերուն, զոր ապրիլին գրած էինք Խարբերդի և Տիգրանակերտի շրջանի հայութեան առթիւ։ Կարծիքնուս մէջ չէինք խաբուած. Նոյն շրջանի հայութիւնը արդէն վաղուց չէ կրցած տանիլ «դանակը ոսկորին հասած» վիճակը։ Անտարակոյս՝ տեղւոյն հայութիւնը նիւթականապէս փճացած կըլլայ, և ոչ հայաշատ վայրերուն մեր եղբայրները՝ խալամ բարբարոսներու ձեռամբ մեծամասամբ նահատակուած, սակայն մօտ կէս դարէ ի վեր շարունակ, այլազան խողխողումներու մէջ կեանքը անթերելով դուրս բերող ժողովուրդը՝ Աստուածով այս անգամ ալ պիտի չչնջուի իսպառ։ Սակայն՝ օգնութիւն հարկաւո՛ր է դարձեալ, օգնութիւն...։

Ռուսիոյ սահմանին մերձ հայութիւնը՝ ամեն աղէտքի պահերուն՝ Թիւրքիայէն Կովկաս փախչելով առ հասարակ ազատած է, մեծ մասամբ ալ ճանապարհին կոտորուած։ Իսկ ներքին գաւառներուն ժողովուրդը՝ առ հասարակ ինքնիրեն ապաստանիլէ և, շատ շատ, Ամերիկա փախչելէ զատ ուրիշ միջոց չէ ունեցած։ Այս վերջինը պղպջակ լեռը ծակելով ազատիլ ըսել է անշուշտ։

Տիգրանակերտ քաղաքին հայերը, բացի ս. Սարգսի թաղէն, 1895-ի դէպքին անհեղօրէն անհաւասար կռիւներու շնորհիւ ազատեցան, ինչպէս և Կամուրջը (Եդեսիա) ու այլ տեղեր։ Իսկ Խարբերդի Մեզրէն, իր հնարիմացութեան շնորհիւ, նոյն Թաւականէն վերջ կրկնուող դէպքերուն շարունակ ցոյց տուաւ տակաւ, որ հայերը՝ նախօրդ դիւրին կերպով ջարդուողները չեն։ Ադանայի կոտորածները եթէ չծաւալեցան շատ տեղեր, շնորհքը ինքնապաշտպանութեանն էր։ Չնքուշը (Դիարբեքիրի և Խարբերդի մէջև) հիանալի սարսափ ազդեց նոյն պահուն և ազատեցաւ....։

Մենք չենք մոռնար, որ այս բանը արտակարգ բան մըն է. Թիւրքը բոլորովին տարբեր հոգւով զինուած է հայուն հանդէպ. ինք պատերազմի երթալէն վերջ ամեն ինչ քարուքանդ կընէ, իրմէն վերջ ջրհեղեղ կամ արիւնհեղեղ տեսնել կուզէ... Կը մեռցնեն հայութիւնը, այո, սակայն եկէք ապրեցնենք հայութիւնը՝ ապրեցնենք զմեզ՝ միութիւնով, օգնութիւնով։

Կը լսե՞նք ձայնը, որ Խարբերդէն կուգայ. թշնամիին սրտէն սկսուած ծակը կը պեղուի. պեղող յուսահատ մեր դժբաղդ եղբայրները՝ Վասպուրականի պէս՝ անպատճառ մեզի՝ դէպի ռուսահայերը աչքերնին յառած կը գործեն։ Անոնք՝ բոլոր Թիւրքահայ դժբաղդները, որ այլ ևս այս պահուն միահաղոյն ազատարար Աստուծոյ և ազատարար ռուս բանակին կը սպասեն, անոնք զմեզ՝ ազատ մնացողներս շատ աւելի գործօն, շատ աւելի ճգնող վիճակի մէջ կը կարծեն...

— Եղածէն աւելի ինչ կրնանք ընել,—պիտի ըսուի թերևս։

— Ոչ, մենք գերագոյն ճիգերնիս ի գործ չդրինք դեռ,—պիտի ըլլայ պատասխանը անշուշտ։

Այն չէ մեր գերագոյն ճիգը, ինչպէս որ կը շարժինք. երբեք այն չէ հարկաւ։

Մենք դեռ կուսակցականին, կղերականին ու աշխարհականին ծածուկ թոհը ու բոհը ունինք, որ չի թողուր լսել մեր փրկութեան կոչը։ Առաջի տարիներէն քիչ շատ լաւ ենք... սակայն այդքանը չէ, որ պիտի փրկէ մեզ։

Մենք կրնանք՝ ազգովին լարուած՝ միահամուռ գործել, հնչուած վայրկեանին համար՝ որ կը ղօղանջէ ահա։

Գաղթական

Ա. ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ

(Արտասանված յուլիսի 2-ին Բագւում, ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում, հայկական 6-րդ կամաւորական գնդի հրամանատար Գրիգոր Աւշարեանի դագաղի վրա)

—

Սիրելի հրամանատար.

Հայկական պանթէօնի անմահները հրճւում են այսօր։ Հրճւում են, որովհետև հերոսի մահվամբ ընկնելով ռազմի դաշտում և մահվամբդ անմահութիւն խլելով՝ դու ևս արժանապէս դասվում ես ազգային անմահների թւում և քո յաղթական մուտքով ճոխացնում ես դից այդ կայանը։

Դու, որպէս երբեմնի քաջազն սպարտացիք, դարձել ես այսօր հայրենի քաղաքդ քո վահանի վրա, պատիւ ու հպարտութիւն պատճառելով ծննդավայրիդ, որ հանդիսաւոր հրաժեշտի համար բոլորվել է դագաղիդ շուրջը։

Ես լսում եմ հեկեկանքներ և տեսնում առատօրէն վազող արտասուքներ, սակայն ես կուզէի, որ ոչինչ մորմոք ու կսկիծ և ոչ էլ լալկանների ճիչ ու աղաղակ չը վրդովէին քո յաւիտենական նիրհը և ոչ էլ դառնացնէին մեզնից բաժանման վերջին ռոպէն։

Դուք, հայրենակիցներ, որ տխրադէմ և ծանր խոհերով պաշարված խուռնախուռն կանգնած էք այստեղ, դադարեցրէք արտասուքները հերոսի կողքին, զի արտասուքները վայելչական չեն մահը սարսեցնող քաջի մօտ։

Լացն ու լալկանները թուլացնում են զրահն ու կորովը մի ժողովրդի, որ մեծ նպատակներ ունի իր առջև։ Դարե՛ր, ձիգ դարեր են, որ մեր հայրենիքը դառել է լացի ու արեան ծով. արդ՝ էլ հերիք լաց. դէպի գործ, դէպի կռիւ։

Հսկայ գործ, ահաւոր կռիւ է մեզ սպասում, և ցանկալի վախճանական նպատակին հասնելու համար լացը չէ որ օգնելու է մեզ, այլ յամառ աշխատանքը մի փոքր ժողովրդի, որին ճզմել ու ջնջել է ուզում թիւրքական եաթաղանը։

Այո՛, մենք փոքր ժողովուրդ ենք, սակայն մեծ ենք մեր ձգտումներով, մեծ ենք մեր ռազմի կորովով և մեծ՝ մեր անսպառ կենսունակութեամբ։ Դարերի հարուածները և մարդակեր բռնակալների ամենակերպ հալածանքները չը կարողացան սպանել մեր մէջ՝ ազատ ապրելու վեհ ձգտումը։ Այդ ձգտումն է, որ ծնեցրել է մեր մէջ հերոսներ և այդպիսի հերոսներից մէկին դէպի յաւիտենականութիւն ճամբելու ենք եկել այստեղ, և թող այսուհետև հերոսների յիշատակը փոխանակ լացի՝ լինեն մեզ համար մղումն ու խթան դէպի նոր մարտեր, դէպի նոր մաքառումներ։

Ապրել ուզողը մաքառման ու կռւի ընդունակ պէտք է լինի։ Ապրել ուզող ազգը չը պէտք է խնայէ գոհ ու զոհաբերութիւններ։ Ամբողջ երկրագունդը գրեթէ հրդեհված է պատերազմով. այդ հրդեհը ճարակել է և մեր տանջված ու ծուէն-ծուէն եղած հայրենիքը, և այդ հրդեհը կը մարի միայն մեր արեամբ և բիւրաւոր կեանքերի զոհաբերութեամբ և Աւշարեանների նման հանդիսանալովը հայրենիքի փրկութեան սեղանին։

Ներկայ ահեղ պատերազմը ես նմանեցնում եմ մի հսկայ զանգահարութեան, որի ղօղանջը գուժում և աւետում է մահն ու յարութիւնը զանազան ազգերի։ Մեզ համար այդ ղօղանջը յարութեան ղօղանջն է։ Մենք մի ժողովուրդ ենք, որ այժմ համարձակ նայում է մահվան աչքերին, արհամարհում մահն ու կախաղանները և գիտակցաբար արեան ճանապարհով քայլում դէպի ցանկալի ազատութիւնը։ Հովանաւորված մեծ կայսրութեան քաջարի բանակից՝ մեր հազարաւոր կամաւորները արձանացել են այսօր մեր դարաւոր ու ատելի թշնամու դէմ և վճռում են մեր գոյութեան հարցը։ Աններեւակայելիօրէն ծանր գործ է բաժին ընկել մեր կամաւորներին և ծանրագոյնը վիճակվել է մեր գնդին, 6-դ կամաւորական գնդին, որ չը նպաստաւորված ազգից, երբեմն խորթ զաւակ, զուրկ ազգի միլիոններից, մերկ ու անօթի իր կուրծքն է պարզել թշնամու գերազանց ոյժերի հրոսակների դէմ։ Ջերմ հաւատով դէպի մեր անտեսված և խորթ համարված գնդի միսիան, ոգեւորված հերոս հրամանատարի անմոռ յիշատակով և լցված վրէժովը դժոխքի վերածված հայրենիքի՝ մենք կը քայլենք դէպ առաջ։

Եւ դու, սիրելի հրամանատար, որ ընկար վաղաժամ քո փայլուն յաղթանակների հէնց սկզբում, որ շատ շուտ որբ թողիր քո սիրած գունդը, գնա խաղաղ դէպի քո յաւիտենական օթևանը և աւետիր մեր անմահներին, որ ազգը սպառազինել է իր ողջ ոյժերը՝ ողջունելու ցոլքը արդէն ծագող ազատութեան արշալոյսի։

Քո յաղթական թողած դրօշը մեր գունդը կը պահէ անարատ և քո յիշատակը կը մղէ մեր անօթի, բայց քաջաբարօրէն կռւող մարտիկներին դէպի նոր գոռ մարտեր, և թափված արեան հեղեղից կը ծնի մանուկ Հայաստանը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Դվինայի և Նէմանի միջև էական փոփոխութիւններ չը կան։ Հեծելազօրի և առաջապահ զօրամասերի միջև կռիւները շարունակվում են։

Կօվնայից դէպի հարաւ-արևմուտք թշնամին կռւով լոյս յուլիսի 13-ի գիշերը ետ մղվեց Էսիւ գետի այն կողմը։

Նարէվի զօրաճակատում յուլիսի 12-ին և 13-ին ճակատամարտը շարունակվում էր մեծ լարուածութեամբ սկսած Դոբրօլենկա գիւղի մօտից մինչև Նովօգեօրգիեվսկ բերդի շրջանը։ Մենք մեր հակայարձակումներով թոյլ չենք տալիս թշնամուն տարածվել Նարէվի ձախ ափում։ Շատ գիւղեր և ծառաստաններ ձեռքից ձեռք են անցնում։

Զափազանց յամառ բնոյթ ստացաւ կռիւը Րօժանից դէպի արևելք՝ անտառի մէջ։ Յուլիսի 13-ի երեկոյեան թշնամին այստեղ կռւի հանեց մեծաթիւ պահեստի զօրագնդեր Սէրօցկից վերև։ Նարէվի երկու ափերով մենք գործում էինք աջող յարձակումներ, ստիպելով թշնամու զօրամասերից մի քանիսին փախուստի դիմել անկարգ։

Ցեպլելին գիւղի շրջանում մենք գերեցինք 700 գերմանացի և ձեռք ձգեցինք մի քանի գնդացիր։ Թշնամու հակայարձակումը վանվեց զրահապատ աւտոմօբիլների օգնութեամբ։

Վիսլայի ձախ ափում յուլիսի 13-ի արշալոյսին սուինային աջող յարձակումով մենք վանեցինք թշնամուն, որ փորձում էր մօտենալ Նատարժին-Պեասէչնօ ռազմաճակատին։

Վիսլայի և Վէպրժի միջև լռութիւն է. իսկ այդ գետից դէպի արևելք մինչև Բուգ ճակատամարտը շարունակվում է։

Րակօլուպա-Մայդան Օստրովսկիյ շրջանում յուլիսի 13-ի երեկոյեան գերմանացիք առաջ խաղացին խոշոր ոյժերով և ձեռք ձգեցին մեր խրամատների մի մասը, բայց յետոյ մեր հակայարձակումով նրանք ետ մղվեցին։

Առանձնապէս եռանդով յարձակում գործեցին՝ առաջվայ նման՝ գերմանացիք Գրուբէշօվից դէպի հիւսիս, բայց մենք շարունակում ենք վանել։

Անիօպօլ գիւղի մօտ մեր զօրքերը գործեցին չեշտակի հակայարձակում։

Բուգի վրա յամառ կռիւներ են Սօկալ-Պոտուրժիցէ շրջանում, ուր թշնամու ոյժերի մի մասն անցաւ գետի աջ ափը։

Դնէստրի և Պրուտի միջև թշնամին գործում է պարզիւն և մասնակի յարձակումներ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՓԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

«Սուշէի մօտ և Սուասօնի շրջանում թնդանօթային կռիւներ են։ Այի անտառի խրամատներում ականային կռիւ է։ Գերմանացիք ռմբակոծեցին Գարտմանս-Վէյլէրկօպֆը։

«Մեր օդագնացները ռումբեր նետեցին Նանտիլուայի կայարանի վրա։

«Արտուայում թնդանօթային կռիւը թուլանում է։ Մի քանի մեծ ռումբ ընկան Արրասում։ Շամպայնում, Պէյր-Բուէժուր զօրաճակատում և Վօկուայում տեղի է ունենում ականային կռիւ։ Աջողութիւնը մեր կողմն է։ Լեպրէտրի անտառում կատաղի թնդանօթաձգութիւն է։ Պօնտ-ա-Մուսօնը ենթարկվեց ռմբակոծութեան։ Թշնամին ռմբակոծեց Բանտէսապտի մօտի դիրքերը»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՀՌՕՄ. — Գլխաւոր բանակից յայտնում են. Երէկ Իզօնցօ գետի ստորին հոսանքում, թնդանօթային աջող ռմբակոծութիւնից յետոյ, մեր հետևակ զօրագնդերը վճռական առաջխաղացման ձեռնարկեցին և բաւականին առաջացան։ Դէպի արևմուտք, մենք ձեռք ձգեցինք Բօսկօ-Դէլլա-Կապպուչինօ անտառի մեծ մասը։ Կենտրոնում մենք գրաւեցինք մի քանի խրամատ Սան-Մարտինօյի մօտ։ Սէյբուսի լեռը աջ զօրաթևում մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցնում և, վերջապէս, իր մեծ մասով մնաց մեզ։ Ամենուրեք սկսվել են կատաղի կռիւներ և գլխաւորապէս անտառի մէջ, ուր թշնամին շատ ամրացել է և մենք ստիպված էինք քշել նրան այնտեղից սուիններով։ Թշնամին գործադրեց խեղդող գազեր պարունակող ռումբեր, որոնցից մեր զօրքերը պաշտպանվում էին դիմակներով։ Օրվայ վերջում մենք ձեռք ձգեցինք մօտ 1600 գերի, որոնցից 30-ը օֆիցեր են։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ ի նկատի ունենալով Պէլագօզա կղզու կարևոր ռազմագիտական նշանակութիւնը, իտալական ծովային ոյժերը գրաւել են այն։

ՀՌՕՄ. — Մինչև օրս իտալացիք գերել են թշնամու զօրքերից 18,000 զինւոր, որոնցից 400-ը օֆիցեր են։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՆԻՇ. — Սերբիական «Պրէսս բիւրօն» հաղորդում է.

Լոյս յուլիսի 8-ի գիշերը սերբիական մի փոքրաթիւ զօրախումբ Զիթարէ գիւղի մօտ անցաւ Դրինայի ձախ ափը և, դարան մտնելով, սկսեց սպասել թշնամու հետախոյզ զօրամասի մօտենալուն։ Զգնալով, որ թշնամին թւով գերազանցում էր սերբիական զօրախմբից, նա ենթարկվեց յարձակման և փախուստի դարձաւ, թողնելով մի քանի սպանված։ Մեր զօրախումբը վերադարձաւ անվնաս։

Միևնոյն օրը առ. ժ. 8-ին մենք նկատեցինք մօտ 100 զինւոր, որոնք ամրութիւններ էին կառուցանում Սավայի ձախ ափում. բայց հէնց որ մեր կողմից սկսվեց հրացանաձգութիւն, զինւորները փախան։ Մի քիչ յետոյ նրանք վերադարձան և նորից ցրւեցան եղան մեր թնդանօթային կրակից։ Թշնամին փորձեց պատասխանել թնդանօթաձգութեամբ, բայց մենք ստիպեցինք շուտով լռել։

Յուլիսի 10-ի առ. ժ. 5-ին թշնամու աէրօպլանները 3 ռումբ նետեցին Բէլգրադի վրա. պայթումից վիրաւորվեցին 6 մարդ։ Նիւթական վնասն անշան է։ Մեր աէրօպլաններից մէկը բարձրացաւ հետապնդելու և Բօրչա գիւղի մօտ կտրեց թշնամու աէրօպլաններից մէկի ճանապարհը, որի վրա կրակ բացեց գնդացիրից։ Թշնամին պատասխանեց հրացանաձգութեամբ, բայց շուտով նրա գործիքն ընկաւ Բէլօզվի մօտ։ Մեր աէրօպլանը ռումբ նետեց ընկած աէրօպլանի վրա։

Միևնոյն օրը թշնամուց վրէժ լուծելու համար մեր 2 աէրօպլան նետեցին 6 ռումբ. նրանցից մէկն ընկաւ կայարանի մօտ, միւսն ընկաւ Նովի-Սադի մօտ, իսկ մնացած 4-ը ընկան Պետրովարդին բերդը։

Թշնամու աէրօպլանները Բէլգրադի վրա նետեցին 2 ռումբ, որոնց վրա կար հետևեալ գրութիւնը «Մենք ռումբեր ենք ձգում Բէլգրադի վրա միայն այն պատճառով, որ յուլիսի 7-ին սերբ օդագնացները նետեցին 13 ռումբ անպաշտպան տեղերի վրա»։ Դա բոլորովին անհիմն է։ Մեր օդագնացները ռումբեր են նետել միմիայն զինւորական կէտերում, և ոչ թէ բաց քաղաքներում։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ԱԲԵՐԴԻՆ. — «Թէրտ» շոգենաւը ջրասուզվել է գերմանական սուզանաւից Հիւսիսային ծովում. նաւաստիներից 4-ը խեղդվել են։

«Բրիտօն» ձկնորսանաւը ջրասուզվել է։ Սպանվել և անհետ կորել են 6 հոգի։

ՓԱՐԻԶ. — Միջերկրական ծովի նաւատորմի կազմին պատկանող «Բիսսօն» հականաւակը կատարել է փայլուն գործ, ոչնչացնելով Լակօստա կղզում գտնվող կայանը, կտրելով հեռագրաթելերը և սպանելով մի քանի աւստրիացու։ Ֆրանսիացիք կորցրին սպանված միայն մի նաւաստի, որին հանդէսով թաղեցին Բրինդիզիում։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՎԱՇԻՆԳՏՕՆ. — Զինւորական մինիստրութիւնը մտադիր է հասցնել զօրքի պահեստի կազմը մինչև կէս միլիոնի, չը հաշւած միլիցիան։ Ծովային մինիստրութիւնը մտադիր է միջնորդել թոյլատրելու կառուցանել 30 սուզանաւ, 4 դրէդնօուտ, մի քանի յածանաւ և մեծ թւով այլ տեսակի ռազմանաւեր։

ԼՕՆԴՕՆ. — Ամբողջ Լօնդօնում յուլիսի 12-ին աղօթքներ եղան թագաւորի և ցամաքային ու ծովային ոյժերի համար։ Առանձնապէս հանդիսաւոր էր պատարագը ս. Պօղոսի տաճարի առաջ։

Լօնդօնի եպիսկոպոսը քարոզի ժամանակ գովասանքի խօսք ասաց Ֆրանսիայի և Բելգիայի մասին։ Ցետոյ, խօսելով Ռուսաստանի մասին, եպիսկոպոսը ասաց, որ Ռուսաստանը երբէք չի պարտվի, քանի գոյութիւն ունի աշխարհը, ոչ միայն իր երկրի հսկայ տարածութեան պատճառով, այլ և ռուս ժողովրդի հոգևոր ոյժի պատճառով։

ՓԱՐԻԶ. — Կէսօրից յետոյ պատգամաւորների պալատում կայացաւ կարգադիր կօմիտէների ֆրակցիոնական բիւրօյի նիստը։ Ներկայ էին բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները։ Հաւաքորները անհրաժեշտ գտան, որպէսզի յանուն ժողովրդական ինքնապաշտպանութեան աւելի իրական դառնայ երկու պալատների 2 գլխաւոր մշտական մասնաժողովների վերահսկողութեան իրաւունքը այն պայմանով, որպէսզի այդ վերահսկողութիւնը չը նուազեցնէ գործադիր իշխանութեան իրաւունքը։

ՍՕՖԻԱ. — Այն լուրերը, թէ իբր Նէվրօկօպի շրջանում Բուլղարիան մեծ զօրավարժութիւններ է կազմակերպում, բոլորովին անհիմն են։

Կադիկօյում կատարված մահափորձի առիթով երկու դատապարտվածները ենթարկվեցին մահապատժի։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՕՏԱՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՍՏՕԿՀՕԼՄ. — Բեռլինից հաղորդում են, որ լրագիրները միաբերան ամերիկեան նօտան ընդունում են վերին աստիճանի անբաւարար, կարծիք յայտնելով թէ նօտան մտադիր է անտես անել հարցի գլխաւոր կէտը և անուշադիր է թողնում այն փաստը, որ Գերմանիան պատերազմում է այժմ իր գոյութեան համար։ Գերմանիայի համար շատ թանգ արժէ Ամերիկայի հետ բարեկամ մնալը, բայց այդ հանգամանքը ընաւ գերագոյն բարիք չէ ներկայանում։ Նոր զիջումներ անել՝ կը նշանակէ ստորանալ։ Պատերազմը սուզանաւերի օգնութեամբ պէտք է շարունակվի։

«Պօստը» պահանջում է, որպէս զի Գերմանիան պատասխանէ շատ հակիրճ խօսքով, այն է՝ «ոչ»։

«Թօյէչէ-Ցայտունգը» ասում է, որ Ամերիկան ձգտում է թուլացնել Գերմանիան յօգուտ Գերմանիայի թշնամիների։ Այդ արդէն չէզոքութիւն չէ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. В.»-ն հաղորդում է, որ իշխ. Տրուբէցկօյի անակնկալ Նիշ վերադառնալը ցոյց է տալիս, որ սերբերի յամառութիւնը ընկճվել է և նրանք զիջում են Բուլղարիային Մակեդոնիան։

◆ Բուլղարիայում հաստատ տեղեկութիւններ են ստացվել այն մասին, որ աւստրօ-գերմանական զօրքերը պատրաստվում են արշաւել դէպի Սերբիա, եթէ միայն արևելեան զօրաճակատում ստեղծվի հաստատ դրութիւն գերմանացի զօրքերի համար։

◆ Լվովում քաղաքապետի կարգադրութեամբ իջեցրել են բոլոր ռուսական ցուցանակները և ջնջել են ռուսական մակագրութիւնները։

◆ Ամերիկեան ռազմի նաւատորմը պատրաստվում է մեկնել անյայտ ուղղութեամբ։

◆ Վարշավայի մօտ, Պրուշկովի և Տվօրկի վրա գերմանական աէրօպլանից նետել են ռումբեր. սպանվել են 18 մարդ։

◆ Ջիօկօնդա պատկերը գողացող իտալացի Պերուջիօն խոստովանել է, թէ գերմանացիք դրդեցին նրան կատարել այդ գողութիւնը Իտալիայի և Ֆրանսիայի միջև վէճ ձգելու նպատակով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 յուլիսի

ՄՕՍԿՎԱ. — Ապրուստի թանգութեան դէմ մաքառելու հարցի առիթով համագումարի ընդունած բանաձևերի մէջ ասված է, թէ անհրաժեշտ է ազգաբնակութեան մատակարարութեան գործը կենտրոնացնել մի կենտրոնական մարմնի մէջ, որի գլուխ կանգնած պէտք է լինի պաշտօնական անձն, երկրի վստահութիւնը վայելող և մինիստրների խորհրդի կազմից։ Այդ անձին կից հաստատվում է խորհուրդ քաղաքների, զեմստվօների և տեղական կօմիտէների կազմի մէջ մտնող հաստատութիւնների ներկայացուցիչներից։ Ազգաբնակութեան մատակարարութեան գործը տեղերում կենտրոնանում են քաղաքային վարչութիւնների ձեռ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

(Արևելեան պատմուածք)

(Վ. Դօրօշևիչի)

I

Սուլթան Ազիզը մի կին ունէր։ Նրան կոչում էին Զօրայրա. յետոյ նրան անուանեցին աշխարհիս առաջին գեղեցկուհին։

Սրանից էլ առաջացան բոլոր դժբաղդութիւնները։

Ահա թէ ի՛նչ պատահեց, և թէ ինչպէս պատահեց այն ամենը, ի՛նչ որ պատահեց։

Մի անգամ շուկայում, իր եղբօր խանութի մէջ, որը թանգարժէք իրեր էր վաճառում, բանաստեղծ Սելիմը պատահեց մի կնոջ, որ երիտասարդ և վայելչակազմ էր, դատելով նրա՝ լայն ծածկոցի տակ ուրուագծված պատկերից։ Կինը վեր առաւ իր համար թանգարժէք առարկաներ և, երբ պէտք է վճարէր, բացագանչեց.

— Ա՛խ, ի՛նչ խայտառակութիւն. հարիւր լիրան չի լրանում՝ լիովին վճարելու համար։ Կանայք երբէք փող չեն ունենում, բայց նրանք միշտ սաստիկ ամաչում են, որ իրանք փող չունեն։

— Անհանգիստ մի՛ լինիր, տիկին,—ասաց նրան Սելիմի եղբայրը, թանգագին իրերի վաճառողը.—ես կուղարկեմ քեզ մօտ ծառայիս, և դու նրան կը հատուցանես տանը։

— Բայց իմ մօտ տուն անհնարին է ներս մտնել ոչ քո ծառային, ոչ քեզ,—պատասխանեց կինը.—ես ապրում եմ սուլթան Ազիզի ապարանքում։

Այն ժամանակ բանաստեղծ Սելիմը մի կողմ տարաւ նրան և ասաց.

— Գեղեցիկ անծանօթուհի, հանգիստ կերպով վեր առ այդ առարկաները. ես երաշխաւորում եմ քո փոխարէն, և վաճառողը ինձ կը հաւատայ, որովհետև նա իմ եղբայրն է։

Կինը բաւականութեամբ նայեց Սելիմի վրա և ասաց.

— Ինչու դու կարծում ես, որ ես գեղեցկուհի եմ. ես այլանդակ եմ, ինչպէս ինքն այլանդակութիւնը։

Սելիմը պատասխանեց.

— Քո ամբողջ մարմինից միայն լեզուդ կարող է ստել, մնացած բոլորը ճշմարտութիւն է ասում և կատարում է այն, ինչ խոստանում է։ Դու ունես փոքրիկ ձեռներ, և քո հանդերձի տակից ես տեսնում եմ քո հիանալի ոտը, որը նոյնպէս փոքր է, ինչպէս և քո ձեռը։ Քո աչքերն ինձ խելագարեցնում են, և ես կարծում եմ բոլոր մնացածը համապատասխանում է քո աչքերին։

Կինը ծիծաղեց.

— Ես կը կամենայի այնպէս ազնիւ լինել, ինչպէս իմ աչքերը, և կատարել այն, ինչ խոստանում եմ։ Բայց զուցէ փող չունեմ, որպէսզի քեզ վճարեմ։

Սելիմը գլուխ տուեց ու ասաց.

— Բնութիւնը հոգացել է ձեր՝ կանանց մասին։ Պարտք վճարելու համար, ձեզ ամենևին փող հարկաւոր չէ։

Կինը նորից ծիծաղեց։

— Լսում և հասկանում եմ։ Բայց հարկաւոր է պարտք ստանալը կարողանալ։ Եթէ կարող ես սպրդել ապարանքի պարտէզը, ես պատրաստ եմ պարտքս հատուցանել։ Որովհետև ինձ դուր է գալիս ոչ միայն քսակը, այլև այն մարդը, որին նա պատկանում է։

Սելիմը պատասխանեց.

— Ալլահը ստեղծեց ինչպէս խրամատը, այնպէս և մեր ոտները, որ նրա վրայով թռչենք։ Ալլահը ստեղծեց խուչուխութերը և մարդուն տուեց գլուխ, որ նրանց կողքումն անց կենայ։

Կինն ասաց.

— Ձեզ՝ տղամարդկանց մօտ երգի սկիզբն է գեղեցիկ, իսկ վախճանը միշտ վատ։ Դու երգդ այլապէս կը վերջացնես, քան թէ սկսեցիր։ Դու սկսեցիր որպէս առատաձեռն մարդ, և ես հաւատացած եմ, որ կը վերջացնես ինչպէս մի վաշխառու։ Դու քո պարտքդ կը վերցնես վաշխով։

Սելիմը գլուխ տուեց և ասաց.

— Ես կաշխատեմ, որպէսզի քո համբոյրը մի լումայից աւել չարժենար։

Այս խօսքերը դուր եկան կնոջը. նա բարձրաձայն ծիծաղեց և ասաց.

— Ինչ ստորութիւն ինձ համար։ Սակայն ես պէտք է պատժված լինեմ այն պատճառով, որ սկսեցի խօսել ինձ անծանօթ տղամարդու հետ։ Վաղը եկ պալատական պարտէզը ուղիղ կէսօրին։ Այդ ժամին մեր տիրուհի Զօրայրա սուլթանուհին միայնակ լողանում է վարդաթփերով շրջապատված լճում։ Մենք ազատ ենք լինում։ Ես առաջին սպասաւորուհին եմ, և դու ինձ կը գտնես բանանի պուրակում։ Ցվաղն, ցկէսօր։

Սելիմը գլուխ տուեց ու ասաց.

— Լսում և հնազանդվում եմ։ Եթէ արևը կամենայ ուղիղ կէսօրին լինել իր տեղում, նրան արժէ միայն հայեացք ձգել, թէ արդեօք բանաստեղծ Սելիմը մտնում է սուլթան Ազիզի պարտէզը։

Կինը գնաց։ Սելիմը ձեռնարկեց հիւսել յանկարծակի հանդիպման երգը, որովհետև բանաստեղծները յեղաշրջում են ամեն ինչ երգի։ Հետևեալ օրը, երբ ժամանակը մօտեցաւ կէսօրին, Սելիմը ոսկեկար թաշկինակով մօտեցաւ դռնակին, որի մօտ կանգնած էր պահակը, գլխից մինչև ոտը զինված։

— Թող Ալլահը կատարի քո բաղձանքը այնպէս, ինչպէս և իմը,—ասաց Սելիմը։

— Թող լսելի լինեն Ալլահին քո խօսքերը,—վրա բերեց պահակը։

— Բարեկամ,—դարձաւ նրան Սելիմը,—ահա պերճաճոխ ոսկեկար թաշկինակ։ Պահպանիչ բաղդի և պատուի՝ մեր հրամայող սուլթանի նորին բարձրութիւն ներքինի Աբդուլլահը գնեց այդ թաշկինակն ինձանից վճարելով 80 ոսկի, իսկ 20 ոսկին պատուիրեց գալ ստանալ այսօր։ Տասնին կը վերցնեմ ինձ, իսկ մինը կը տամ քեզ՝ աշխատանքիդ համար։

Պահակը մտածեց. «Ծառայութիւն արած կը լինեմ զօրեղագոյն ներքինուն։ Կը ստանամ 20 ոսկին և ինձ կը վերցնեմ։ Իսկ այդ ռամիկի վզակոթին կը տամ, որպէսզի պարապ-սարապ թրև չը գայ պալատում, դատարկ բաների ետևից»։ Վեր առաւ թաշկինակը և գնաց, իսկ Սելիմին թողեց պահպանելու դռնակը.

— Նայիր, որ ոչ ոք չը գնայ։

Սելիմը, առանց յապաղելու, ուղևորվեց դէպի պարտէզ։

Նա տեսաւ արդէն բանանների պուրակը, բայց ճանապարհին կար վարդերի մացառ և մացառի ետևից լսվում էր ջրի ճողփոց. մի ինչ-որ էակ լողում և կայտառում էր։

«Ճանապարհին, դէպի իմ նազելիս, կը նայեմ օտար կնոջ վրա էլ»,—ասաց ինքն իրան Սելիմը և սկսեց ներս սպրդել վարդի մացառների միջից, որպէսզի նայի լողացող սուլթանուհուն։ Արդեօք նա այնպէս գեղեցիկ էր, ինչպէս երգերի մէջ էր երգվում։

Նրան տեսնելով Սելիմը մտածման մէջ ընկաւ. «Կամ մինչև այժմ ես չեմ տեսել կանանց, կամ այն հարիւրաւոր կանայք, որոնց ես տեսել եմ մինչև այժմ, կանայք չէին։ Երբ լուսինը յայտնվում է, աստղերը նսեմանում են»։

Ցանկանալով մօտից նայել, նա այնպէս ծակծկվեց վարդի փշերից, որ յանկարծակի ճչաց, և Զօրայրան սարսափահար դուրս ցատկեց մարգագետնի վրա։ Վախենալով թէ մի գուցէ նա կաղաղակի, Սելիմը ընկաւ նրա ոտները և բացագանչեց.

— Խնայումն և ներումն։ Ես կատարեցի ոճրագործութիւն, տեսնելով ձեզ այդպէս, ինչպէս տեսնում եմ պատահմամբ։ Ես ներս սպրդեցի այստեղ, որպէսզի տեսնվեմ սպասուհիներից մէկի հետ

Սուլթանուհին զայրոյթով բացագանչեց.

— Դու այդ բանի համար մահով կը վճարես։

Այն ժամանակ Սելիմը վեր կացաւ և ասաց.

— Ես կարծեցի, թէ կենդանի կը մնամ, ուստի և խաբեցի։ Բայց եթէ ինձ միևնոյն է՝ վիճակված է մեռնել, ապա ասեմ ճշմարտութիւնը։ Ես եկայ այստեղ նրա համար, որ տեսնեմ Զօրայրա սուլթանուհուն միայն բնութեան զգեստի մէջ։ Լսել էի, որ նա կէսօրին վարդաթփերով շրջապատված լճի մէջ է լողանում, և եկայ, որ զմայլվեմ նրա գեղեցկութեամբ։

Այս խօսակցութիւնը ևս առաւել դուր եկաւ սուլթանուհուն։

— Սակայն դու գիտէիր, դժբաղդ, որ դրա փոխարէն կեանքդ կը տաս։

— Ի՛նչ անենք,—անհոգօրէն ասաց Սելիմը,—եթէ Զօրայրան գեղեցիկ է, ինչպէս դու, վճարը մեծ չէ։

Սուլթանուհին ժպտաց։

— Դու խօսում ես խելացի, բայց վարվում ես յիմարաբար։ Ցաւ կը լինէր ինձ, եթէ իմ ներքինիները քեզ սպանէին։ Սակայն դու այստեղից չես գնայ առանց պատուհասի։

— Հրամայող տիրուհի,—ասաց Սելիմը,—ես այնպէս էլ կը լինեմ պատժված։ Այս րոպէիս դու կը հագնվես, ես էլ չեմ տեսնի այն գեղեցկութիւնը, որով սքանչանում եմ. այս միևնոյն է թէ կուրանամ.

քում։ Այդ գործի առիթով տեղական կոմիտէների մէջ պէտք է մտնեն զէմստվօների, միութիւնների, կոօպերատիվ և պրոֆէսիօնալ կազմակերպութիւնների ներկայացուցիչները։ Անհրաժեշտ է լայն վարկ բանալ քաղաքային ինքնավարութիւններին՝ զարգացնելու տնտեսական ձեռնարկութիւնները, կազմակերպել փոխադարձ վարկի բանկեր համառուսական քաղաքային միութեան մասնակցութեամբ և կարճ ժամանակով գումարներ փոխարինել մանր քաղաքներին. փայտ պատրաստելու գործը ցանկալի է կազմակերպել առանձին՝ հասարակական կազմակերպութիւնների տիպի կազմված կոմիտէների աջակցութեամբ։

Կոօպերատիվ հաստատութիւնների նկատմամբ համագումարն անհրաժեշտ գտաւ վերացնել նրանց զարգացմանը արգելառիթ պատճառները։ Անհրաժեշտ է անմիջապէս լիակատար ազատութիւն ձեռք բերել հասարակական ինքնագործունէութեան համար՝ կոօպերատիվներին աջակցելու մտքով։

Երկրի տնտեսական կեանքը կանոնաւորելու համար ցանկալի ընդունվեց ցուցակագրել բոլոր եղած անասունները, արօտատեղիները, բերքը և վառելանիւթի պաշարը պարբերաբար պահպանելով գները։

Սեկցիաների առաջարկած բանաձևերից անկախ, համագումարը ընդունեց մի ընդհանուր քաղաքական բանաձև, որի իմաստը կայանում է նրանում, թէ ներկայ ժամանակի և թշնամուն շուտով յաղթելու համար անհրաժեշտ է երկրի բոլոր ոյժերի միութիւնը, ինչպէս նաև յարակից դարձնել կեանքը պատերազմի դրութեան հետ։

Թանգութեան դէմ աջող մաքառելու համար անհրաժեշտ ընդունվեց լիակատար ազատութիւն տալ արհեստաւորաց կազմակերպութիւններին և միութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Հնչեց հայկական խորախորհուրդ պրոնունցիամենտօն։

Համայն ազգի սիրտը թնդաց. համայն ազգը վառվեց նրանով։ Արձագանքներ լըսվեցին աշխարհագրական այնպիսի կէտերից, ծովերով, լեռներով, ովկիանոսներով և հազարաւոր մղոն հեռաւորութիւններով մեզանից բաժան այնպիսի անյայտ վայրերից, որոնց գոյութեան մասին մեզանից շատ շատերը գաղափար անգամ չունէին։

Ամենքը լայն բացեցին իրանց սիրտը, հոգին, գրպանը։ Ամեն ոք ձգտեց իրովանն արձագանք տալ այդ կոչին։

Հազարաւոր կտրիճներ աշխարհի ամեն կողմից շտապեցին օր առաջ մարտական դրօշակի տակ մտնել։

Դարերով ճնշված, հալածական, երէկվայ ստրուկ և թշուառ կարծված ժողովուրդը, երբ մոգական գաւազանի ազդեցութեան տակ, ըմբռնեց բոպէի վեհութիւնը և ինքնաբերաբար ոտքի կանգնեց։

Ոգևորութիւնը ընդհանուր էր, անզսպելի։ Ամենքի առաջ դրված էր մի մե՜ծ, հսկայական, դժուարին գործ։ Գործ՝ վառ յոյսերի, գործ՝ անձկալի երազանքների և սպասումների։

Հայ ազգը կոչված էր օրհասական ճիգ թափելով՝ լուսաւոր Եւրոպայի առաջ կանգնել և ապացուցանել, որ իբր ազգ՝ արժանի է հասունութեան վկայականի։

Մի բոպէ այդ խորհրդաւոր պահուն, ամենքիս գլխով կամայ ակամայ միայն մի միտք անցաւ, սուրբ գործի շուրջը առ միշտ գետնին տապալված տեսնել հայութեան դարաւոր թշնամի, նրան յետին թշուառութեան դուռը հասցնող անմիաբանութեան չար ոգին։

Այդ հաւատով էլ պէտք էր պահել ամենքին, այդ հաւատով պէտք է վառ պահել համայն ազգի ոգևորութիւնը, նրանով պէտք է սկսվէր և վերջանար գործը։

Պէտք էր անցեալը տալ մոռացութեան. վառ թոնրի մէջ գլորել հին հաշիւները, հաշտութեան, համերաշխութեան համբոյր տալ իրար, միութեան ձեռք պարզել մէկմէկի, եղբայրութեան գիրկը բանալ իրար հանդէպ։

Այդպէս արին մեզանից մեծ ազգեր։ Երբ հնչեցին ներկայ ահռելի համաշխարհային պատերազմի փողերը, նրանք ամենքը ձեռնամուխ եղան այդ յղումին. Նախ հաշտութիւն բոլոր ներքին տարակարծիք տարրերի և ապա դէպի մարսեան դաշտ թշնամու հետ իրանց ոյժերը չափելու։

Այդպէս էր շշնջում առողջ բանականութիւնը։

Այդպէս էր հնչում և մեր շահը։ Այդ էին կանչում մեր թշուառ հայրենիքի արիւնաներկ քարերը։ Այդ էին աղաղակում ծխի մէջ մնացող հայկական խրճիթները, հազարաւոր լլկված կոյսերի, գլխիկոր պատերին զարկվելով ջախջախված անմեղ անհամար մանկանց և նահատակների գերեզմանները։

Թիկունքում բոցեր և թշնամիներ ունեցողները չունեն իրաւունք դէպ առաջ մղվելու, չունեն իրաւունք քայլ անել փորձելու։

Երբ գործի սկզբում ոմանք ձգտում են ապացուցանել, որ ազգի այդ ընթացքը անհեռատեսութիւն է, որ նա խաղալիք է յուսախաբէութեան, երբ նրանք սառը ջուր ածելով մեր գլխին միմիայն մի նպատակ ունէին, իրանց վախկոտութիւնը և քարասիրտ ժլատութիւնն ու անտարբերութիւնը սքօղելու, մենք արդարացիօրէն վրդովվում էինք ու կատաղում։

Թող այդպիսիները անցնեն ուրացողների շարքը. թող աշխարհային սին փառքը, փափուկ կենցաղի տենչը կլանէ նրանց և թող անհետ կորչեն նրանք. թող յաւէտ աշխարհի երեսից նրանց յիշատակը ջնջվի։ Մենք մեր հայեացքները ուղղենք դէպ ազատարար կոչը, մենք հաւատանք մեր գործին և միանալով դիմենք առաջ, դէպ ուր տանում է մեզ մեր պարտքը, իրերի հոսանքը, պատմութեան անարգել ընթացքը։

Չը վարանենք, չը յուսահատվենք, չը թուլանանք։ Թող այդ լօզունգը ամենքիս համար լինի պատգամ, թող նա լինի մի անխախտելի, սուրբ օրէնք։

Ով դուք, գործի ղեկավարներ. խոնարհվում եմ ձեր առաջ, խոնարհվում եմ ձեր եռանդի, զորովի և կորովի առաջ։ Բոլոր ձեր արած ջանքը, տանջանքը և մեծագործութիւնները անջնջելի պատմութեան են պատկանում։ Ձեր դափնիները մեզ նախանձ չեն պատճառի, այլ հիացում։ Մենք ենք, որ կը լինենք առաջին երախտապարտները ձեր առաջ։ Թողէք կիրքը մի կողմ։ Զգուշացէք սխալ քայլից. բայց թէ դուք արդէն արել էք, խոստովանեցէք ինքներդ, շտկեցէք նրան։ Մի յամառէք նրա մէջ և մի արդարանաք, երբ ձեզ ուրիշները կշտամբեն։

Մի արհամարհէք ոչ ոքի մի սև տանգը, և ոչ ոքի անձնաւորութիւնը։ Մի արհամարհէք մեծին և փոքրին։

Մի լինէք անձնավստահ. օգտուէտ կացուցէք խելացիօրէն ամենքին։ Շահեցէք ամեն մէկի աջակցութիւնը։ Ձեռք մեկնէք՝ ով կամենայ մտնել ձեր շարքերը և այդպիսիին մի հարցնէք, թէ «ինչ է քո անունը»։

Բարձրից մի նայէք այն հիմնարկութիւններին և նրանց ղեկավարներին, լինեն նրանք լրագիր, խմբագիր, քահանայապետ, ազգային գործիչներ, թէ լոկ հասարակական, միևնոյնն է։

Մի՛ մասնաւորէք ձեզ, մի՛ ընտրեալ համարէք միայն ձեզ։ Պատմական անցեալի տխուր օրինակները միշտ աչքի առաջ ունեցէք։ Ամեն մի փոքրութիւն ձեզ միայն զօրացնել կարող է։ Ձեմ ասում նրանց մասին, որոնք համազգային գործչի հռչակ ունեն և որոնց դուք մեզանից աւելի լաւ էք ճանաչում։

Չը պէտք է փակել դռները նրանց առաջ, որոնց ոտքի է կանգնեցրել իրանց սրբազան պարտքը։

Այդպիսի վարմունքը վայել է միայն փոքր մարդուկներին։

Շատ փոքր ենք մենք, չը պէտք է աւելի փոքրացնենք։ Քիչ մարդիկ ունենք, աւելի ևս չը պէտք է քչացնենք։ Ձգտենք գտնել այն հնարը, որով ազգի բոլոր մասերը բարոյապէս կապված լինեն, որ կազմելով մի ոյժ՝ հանուր բեռը առաջ տանեն։

Պատմութիւնից շատ դասեր ունենք առնելու. կայ նրա մէջ մի սև կէտ, որ անդադար ամօթ և կոտրվածութիւն է բերում մեզ։

Անմիաբանութիւն է նրա անունը։

Ջարդենք նրա գլուխը։ Զուրախացնենք եղունգ քաղցրերին։

Սանասարեան
Ն.-Նախիջեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղարաբաղի լուրեր

Խանքենդ, 8 յուլիսի

Երկարատև անձրևային եղանակներից յետոյ ամսիս 1-ից խիստ շոգեր են սկսել։

Բնութեան հասցրած վնասը Ղարաբաղի գիւղացիութեանը շատ մեծ է. կարկուտը, հեղեղն ու պարբերաբար տեղացող քամխառն անձրևները հացաբոյսերին անբուժելի հարուածներ տուին։ Աշնանացանքերը շատ քիչ տեղերում են ազատ մնացել բնութեան արհաւիրքներից, իսկ գարնանացանքերից էլ բաւարար բերք չէ կարելի սպասել. կորեկը գուցէ քիչ լաւ լինի լեռնաստաններում։

Սովորական տարիների պէս այս ժամանակ պէտք է կալը վերջանալու վրա լինէր, բայց՝ անձրևների պատճառով՝ այժմ թէ հունձ են անում և թէ միաժամանակ կալ կալսում, մի բան, որ խիստ նեղութիւն է պատճառում քիչ աշխատող ձեռք ունեցող գիւղացիներին։

Ինչպէս լրագիրներից գիտենք, ուրիշ շրջանների համար կամաւոր հնձւորներ են ժողովվում ուսուցիչներից, ուսանողներից և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներից, բայց Ղարաբաղի գիւղացիութիւնը, որ նոյնպէս կարիք ունի այդպիսի օգնող ոյժերի, զուրկ է մնացել բոլորովին։ Իսկ եղած մտաւորականներն էլ, որ գիւղական ուսուցիչներն են համարվում, քաշվել են իրանց համար Շուշու ազատ մթնոլորտում հանգստանալու։ Գոնէ դրանք իբրև գիտակից մարդիկ՝ մնային գիւղերում հասարակական ոյժերը կազմակերպելու և այդպիսով թերևս որոշ օգնութիւն հասցնէին գիւղացիներին։

Ցանկալի է, որ գոնէ մեր բարեգործական հաստատութիւնները ուշադրութեան առնէին Ղարաբաղի գիւղացիութեան ներկայ կրիտիքական վիճակը։

Ա. Ասլանեան

Հաղբատի վանքը աւերման եզերքին

Հաղբատ, 9 յուլիսի

Հաղբատի պատմական հռչակաւոր վանքը կանգնած է աւերակների վերածվելու անդունդի եզերքին։ Զանգակատունն արդէն ճեղքված է և վերջնականապէս փլվելու համար սպասում է մի թոյլ երկրաշարժի։ Բօլ ու խոտով ծածկվել են տաճարների գլուխները և անվերջ հեղեղների ջրերը ներս ծծվելով մի-մի ճահճներ են դարձրել ներսը։ Կտուրներից թափվում են սրբատաշ թանգագին քարերը և անձրևաջրերը ազատ կերպով ներս թափվելու համար ճանապարհ բացում։ Անտէրութիւնն ու անտարբերութիւնը այնքան համերաշխ կերպով են միացած, որ ոչ միայն ընկնող քարերն իրանց տեղերը դնելու և կամ խոտը նրանց վրայից մաքրելու մասին մտածող չը կայ, այլ և տաճարների բաց դռներն անգամ փակող չը կայ, և այդ բաց դռներից անասունները պարսպի մէջի առատ խոտով կշտանալուց յետոյ մտնում են տաճարները և լցնում իրենց աղբով...

Աւերվում է վանքի շրջապարիսպը. արդէն վաղուց աւերված է վեց սենեակներից բաղկացած շինութիւնը, մինչդեռ Հաղբատը, որպէս հրաշալի ամարանոցատեղի, մեծ պահանջ ունի յարմարաւոր սենեակների, որոնցից ստացված օգուտը կը գործադրվէր նոյն վանքի ծխական դպրոցի օգտին։ Վերջապէս քանդված է դպրոցական շինութիւնը ևս, մինչդեռ մենք երազում էինք այստեղ ունենալ ապահովված ծխական դպրոց՝ գիւղատնտեսական ճիւղով։ Այժմս ոչ միայն գիւղատնտեսական ճիւղով, այլ ծխական դպրոց ունենալու յոյս անգամ չը կայ։ Արդէն չորանում են վանքի երեք պարտէզներն անգամ, թէև նրանք դեռ կանաչ տեսք ունեն շնորհիւ նրանցում առատութեամբ բուսած անպէտք քօլերի։

Մի խօսքով՝ ամեն ինչ գնում է դէպի աւերումների գիրկը, և եթէ այսպէս շարունակվելու լինի մի երկու տարի ևս, մենք կունենանք հնութիւններով հարուստ մի հրաշալի պեղումնատեղի ևս... Վանքը թէև ունի վանահայր, բայց նա ոչինչ անել չէ կարող, որովհետև վանքը եկամուտ չունի»։ Եկամուտ վանքն ունի, իսկ եթէ հերիք չէ, աւելի լաւ է վերացնել վանահօր պաշտօնը և ամբողջ եկամուտը յատկացնել վանքի ու դպրոցի նորոգման գործին, քան թէ թոյլ տալ, որ վերջնական աւերման ենթարկվեն։

Ուխտաւոր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ի նկատի ունենալով որ քաղաքում սկսվել են ստամոքսի հիւանդութիւններ, ոստիկանապետը կարգադրել է ոստիկանական պաշտօնեաներին ոչնչացնել շուկաներում և բազարներում բոլոր խակ և փտած մրգերը։ Զգուշանալ պէտք է մանաւանդ վարունգից։

◆ Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ Մոսկվայի համագումարի նիստերից մինում, ուր քննվում է թանգութեան և նրա դէմ միջոցներ ձեռք առնելու հարցը, Կովկասի ներկայացուցիչները՝ Բաքուի քաղաքագլուխ Խասմամէդովը և Թիֆլ. դումայի իրաւասու Բաբեանը հարց են յարուցել Կովկասում զէմստվային հաստատութիւններ մտցնելու մասին։ Համագումարը շատ համակրութեամբ է վերաբերվել դէպի այդ առաջարկութիւնը։ Ընտրվել է յատուկ մասնաժողով հարցի մանրամասն ուսումնասիրութեան և Կովկասում ու Սիբիրում զէմստվօ մտցնելու մասին եղած բանաձևերը խմբագրելու համար։ Ներկայումս կովկասեան բարձր իշխանութիւնը ձեռնարկել է պատրաստելու այն բոլոր նիւթերը, որոնք վերաբերում են Կովկասում զէմստվային հաստատութիւններ մտցնելու խնդրին։ Այդ պատրաստի նիւթերը ուղարկվելու են ըստ պահանջի պատշաճ վարչութիւններին։

◆ Խոլերայի նշաններով հիւանդացած սանիտարը մահացել է քաղաքային սուր վարակիչ հիւանդանոցում։

◆ Տեղական մի խումբ քիմիկոսներ բանում են քիմիական բաժանմունք ռուսական տեխնիքական ընկ. կովկասեան ճիւղին կից։

◆ Յուլիսի 14-ին պրոֆ. Իւբրեվինչի նախագահութեամբ կայացած բժշկական խորհրդակցութիւնը գտել է, որ հայ վիրաւոր կամաւոր զինուորներին քաղաքների միութեան լազարէթներում ընդունելու կարգն անկանոն է, ինչպիսի կարգը գործադրվում է հայկական կոմիտէի կողմից։ Լազարէթներում կարող են ընդունվել հիւանդ ու վիրաւոր կամաւորներ միայն սանիտարական կայանի պետի կամ կարգադրիչ հիւանդանոցի միջոցով։

◆ Այսօր նշանակված է քաղաքային սանիտարական յանձնաժողովի նիստը՝ մշակելու մի շարք միջոցներ վարակիչ հիւանդութիւնների տարածման առաջն առնելու նպատակով։

◆ Թիֆլիսի պօստային գրասենեակի կառավարիչ Բեաբշինսկին հրաժարվել է պաշտօնից։ Նրա տեղ նշանակվել է Լիբավայի պօստային գրասենեակի կառավարիչ Սմիրնովը։

◆ Տեսնելով որ Արտիստիկ Ընկ. ամառային այգում ամեն օր ներկայացումներ տուող Chat Noir-ը դարձել է անբարոյական մի վայր, ոստիկանապետը խնդրում է նահանգապետին՝ հրամայել դադարեցնել այդ ներկայացումները։

◆ Փոխարքայի դիւանատան տպարանի կառավարիչը խնդիրքով դիմել է փոխարքայի դիւանատան վերատեսչին՝ ի նկատի ունենալով կեանքի թանգութեան ներկայ պայմանները՝ աւելացնել տպարանի գրաշարական կազմի և այլ ծառայողների ռոճիկները։

ԿՈՎԿԱՍ

◆ Բաքուի լրագիրները հաղորդում են, որ դումայի ձայնաւոր Ա. Վաչեանը պատերազմ կանչված զինուորների ընտանիքներին խնամող մասնաժողովին յանձնել է 4000 րուբլի նուէր։

◆ Եկատերինոդարում, Ռոստովում և Աստրախանում սաստիկ շոգերի պատճառով սաստիկ տարածված է փորհարինք հիւանդութիւնը, որ աւելի շուտ խոլերան է յիշեցնում։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ի նկատի ունենալով որ Դումային ներկայացվել է արդարադատութեան մինիստրի առաջարկութիւնը այն մասին, որպէսզի գործադրվի Պետական Դումայի 5 դատապարտված պատգամաւորների պատիժը, նրանց պատգամաւորական կոչումից զրկելու հարցը պէտք է դրվի Դումայի

իսկ կորցնել տեսողութիւնը՝ վատթարագոյն է քան կեանք կորցնելը։

Զօրայեան վերցրեց իր հանդերձը և ծածկվեց։

— Ամենակարող, ուր հասցրեց ինձ զայրոյթը. ես մոռացայ ինչ դրութեան մէջ էի։

— Դու տեսնում ես, հարկաւոր չէ բարկութեան անձնատուր լինել։

— Դու ինձ յիշեցրիր, որ ես մերկ եմ, և դրանով ապացուցիր, որ ես անմիտ եմ։

— Մի՞թէ բանականութիւնը կորցրած մարդկանց կարելի է պատժել։

Զօրայեան ժպտաց։

— Գնա՛, բայց երբէք մի՛ նայիր լողացող կանանց։ Ազնուամիտ տեսնող մարդը, ապակու կտորտանքներով չի զարդարի այլ ևս իրան։

Վերադառնալով դէպի դռնակը, Սելիմը տեսաւ բարկացած պահակին։

— Վատթար մարդ և խաբեբայ,—բացագանչեց պահակը,—գլխաւոր ներքինին քեզանից երբէք ո՛չ մի թաշկինակ չի գնել։ Դու ինձ խաբեցիր, որպէսզի ներս սպրդես մեր հրամայող մեծ սուլթանի պարտէզը։ Ես կը տանեմ քեզ պալատական վերակացուի մօտ, և քեզ կը կախեն։

— Ասենք թէ՝ կախելը կը կախեն երկուսիս, քեզ և ինձ,—հանգիստ կերպով ասաց Սելիմը.—լսի՛ր, յիմար, պատահած ամեն բանի մասին։ Թաշկինակը վեր առ քեզ և շնորհակալ եղիր Ալլահից, որ ես չեմ մատնել քեզ, թէ դու ինչպէս մի ոսկու համար վազում ես սուլթանական սպասուհու հետ։

Պահակը միայն մի կողմ քաշվեց։

Բայց Սելիմը բանաստեղծ էր։ Իսկ Զօրայեան չափազանց գեղեցիկ։ Նա երգեց նրա գեղեցկութիւնը յարաճիգ երգում։

Եւ ի մէջի այլոց ասում էր.

«Վերցնելով վարդի երանգը վարդից և սպիտակ գոյնը մարմարից, բնութիւնը կամեցաւ սքանչանալ. վեր առաւ ամենասև ներկը և կաթեցրեց փոքրիկ սև խալը, որը ես տեսայ այնտեղ, ուր նրան տեսայ, և սպիտակ գոյնը ևս առաւել սպիտակացաւ և վարդի գոյնը էլ աւելի կարմրեց։ Եւ բնութիւնը դադարեց ստեղծագործել գեղեցիկ կանայք, որովհետև Զօրայեայից գեղեցկագոյն նա էլ ոչինչ չէր կարող ստեղծել»։

Երգը դուրս եկաւ ժողովրդին, ամբողջ քաղաքը սկսեց երգել այդ երգը, այնպէս որ նա հասաւ մինչև պալատ։

Յուզվեց սուլթան Ազիզը։ Նա կանչեց իր մեծ վեզիր Դիարբեքիրլին և ասաց.

— Կայ մի անգործ բանաստեղծ, ինչպէս ինձ ասացին, Սելիմ անունով. նա իմ Զօրայեայի մասին երգ է յօրինել։ Եթէ նա միայն դրուատէր նրա գեղեցկութիւնը, այդ ես պարզապէս կը վերագրէի հպատակիս ջերմ եռանդին։ Սակայն նա որտեղից կարող է իմանալ խալի մասին։ Բռնիր նըրան, խոշտանգիր, իմացիր և նրա գլուխը կտրիր։

Վեզիրը պատասխանեց.

— Լսում և հնազանդվում եմ։

Սելիմը, տեսնելով կտտանքի գործիքը, երբ իրան բերին Դիարբեքիրլիի մօտ, ասաց.

— Այդ ամենն աւելորդ է։ Տանջանքի տակ ինչու համար ես քեզ կասեմ բոլոր ճշմարտութիւնը, երբ կարող եմ ասել և առանց չարչարանքի ենթարկվելու։ Ես տեսայ չքնաղագեղ Զօրայեային, թաղնվելով վարդի թփերի մէջ, երբ նա լողանում էր։ Նա արդարև գեղաչքնաղ է, վեզիր։ Եւ ես ներբողեցի նրան և նրա խալը։

— Հէնց դրա համար էլ կը կտրեն քո գլուխը,—ասաց Դիարբեքիրլին։

— Այդ բանը ոչ մի միտք չունի,—բացագանչեց Սելիմը.—Ի՞նչ է ամենագաղտնին աշխարհում։ Մի մտածիր, Դիարբեքիրլի. ինքս կասեմ քեզ։ Ամենագաղտնին աշխարհում միտքն է։ Խօսքին կարող են ականջ դնել, շարժումը կարող են տեսնել։ Բայց մինչև անգամ երբ ես խօսում եմ, դու չը գիտես իմ միտքը։ Շատ կարելի է՝ ասում եմ մի բան, բայց մտածում եմ մի ուրիշը։ Ես բանաստեղծ եմ։ Ես միտքը յեղաշրջում եմ բառի։ Ուրեմն իմ նշանակութիւնը կեանքի մէջ է, այսինքն՝ ամենագաղտնին ակնյայտնի անել։ Հէնց դրա համար էլ Ալլահն ինձ ուղարկեց երկիր. Ինչ բանի համար ինձ կամենում ես պատժել։ Սուլթանուհու գեղեցկութիւնը գաղտնիք է։ Ես այդ գաղտնիքը բացատրեցի։ Ես միայն կատարեցի իմ գործը։

Դիարբեքիրլին ժպտաց։

— Երբ պարկը կամենում են դէն գցել, նրանից հանում են բոլոր հատիկները։ Թափահարիր բոլոր մտքերդ, ինչ որ գլխումդ կան, որովհետև՝ միևնոյն է՝ այդ գլուխդ պէտք է կտրեն։

Սելիմն ասաց.

— Դիարբեքիրլի, համարեա դու ամեն բան ունես՝ վսեմութիւն, զօրութիւն, հարստութիւն։ Ես փոքրիկ, չնչին մարդ եմ, բայց կարող եմ քեզ փառք ստեղծել։ Ուրիշները կը լինեն վսեմ, զօրութիւնը և հարստութիւնները կանցնեն ուրիշներին։ Դու չես լինի, բայց քո փառքդ կը մնայ։ Պահպանիր իմ կեանքը, իսկ ես կը յօրինեմ երգ այն մասին, որ դու քաջ, առնական, բարի և արդարադատ էիր, քան ուրիշ որևէ մէկը։ Ոչ դու կը լինես և ոչ ես, իսկ երգը կը մնայ։ Եւ կերգէ ամբողջ աշխարհը և կիմանայ քաջ, առնական, բարի և արդարադատ Դիարբեքիրլի վեզիրի մասին։ Դու ինձ կը պարգևես կեանք, ես քեզ՝ անմահութիւն։ Ապրանքը գնին արժանի է։

Դիարբեքիրլին մտածման մէջ ընկաւ. «Դուրս է գալիս, որ փառքը շուայտ է, բայց նա գեղեցիկ է։ Ինչու համար ես նրան չը գնեմ»։ Նա կանչեց սուրբ դերվիշին և հարցրեց.

— Սուրբ դերվիշ, դատաւորի համար ամենածանր ոճրագործութիւնը ո՞րն է։

Դերվիշը պատասխանեց.

— Դատաւորի համար ամենածանր երկու ոճիր կայ. մինը փոքր, միւսը մեծ։ Առաջինը՝ բաց թողնել յանցաւորին, երկրորդը՝ դատապարտել անմեղին։

Դիարբեքիրլին հարցրեց.

— Երկու ոճրագործութիւնն էլ միասին կատարող դատաւորը կարժանանա՞յ արդեօք փառքի, թէ անպատւութեան։

Դերվիշը պատասխանեց.

— Անփառունակութեան։

Դիարբեքիրլին ասաց նրան.

— Գնա խաղաղութեամբ,—և ժպտաց։—Իսկ ես դրա համար էլ փառք կունենամ։ Հէնց դրա համար էլ գոյութիւն ունեն բանաստեղծները։

Նա կանչեց մօլլային։

— Ասա ինձ, մօլլա,—ասաց Դիարբեքիրլին,—արդեօք մարդու հետ կարո՞ղ է մի որևէ բան պատահել, եթէ ճակատագիրը նրան չէ տնօրինել։

— Ոչ,—պատասխանեց մօլլան,—ամենայն ինչ գրված է ճակատագրի գրքի մէջ։

Դիարբեքիրլին տուեց նրան հարիւր ոսկի և ասաց.

— Գնա, և թող կասկածի բոպէին որևէ ոք ասի քեզ հանգստացուցիչ խօսք։

Նա հրամայեց բերել առաջին պատահող անցորդին։ Նրա գլուխը կտրեց, ականջներից բռնած բերեց սուլթանին և դրեց կարմիր գորգի վրա նրա ոտների տակ, այնպէս որ՝ նկատելի չը լինի արիւնը։

— Այս մարդու հետ պատահեց այն, ինչ որ գրված է ճակատագրի գրքի մէջ, ասաց Դիարբեքիրլին.—նրան վիճակված էր ընկնել իմ ձեռքից և իմ ձեռքը կատարեց միայն ճակատագրի կամքը։

Լսելով այս բարեպաշտ խօսքերը, սուլթան Ազիզը պատասխանեց.

— Միշտ և ամեն բանում թող լինի Ալլահի կամքը։

— Ահա գլուխն այն մարդու, որ Սելիմ անունով բանաստեղծ էր,—ասաց Դիարբեքիրլին.—նա յանդգնեց գովաբանել քո հրամայողուհի Զօրայեայի գեղեցկութիւնը. թող օրհնաբանեալ լինի նա և նրա խալը, թող սրբազան լինի նա։

Սուլթան Ազիզն ասաց.

— Մեզ բանաստեղծը չէ կարող լսել և այժմ մենք կարող ենք ասել, որ երգը գեղեցիկ է։

Նա նայեց կտրված գլխին.

— Մենք նրան գտանք պատժի արժանի։ Ալլահը գուցէ ուրիշ կերպ դատի. թաղեցէք նրա գլուխը մարմնի հետ միասին, որպէսզի դատաստանի օրը նա կարողանայ կանգնել Տիրոջ առաջ, իբրև բարի մահմեդական։

Դիարբեքիրլի վեզիրը պատասխանեց.

— Լսում և հնազանդվում եմ։

Եւ հրամայեց թաղել իրանը մէկ, իսկ գլուխը մի ուրիշ տեղում, որպէսզի պատժվածը չը կարողանար վերջին դատաստանի օրը գտնել իր գլուխը և կանգնէր անարդարութեան դէմ բողոքով Ալլահի առաջ։

Ահա առ այժմ այն ամենը, ինչ վերաբերում է սուլթան Ազիզին և նրա վեզիր Դիարբեքիրլիին։

Թարգմ. Ս. Բունեաթեան

մերձաւոր նիստերից մէկում։ Սակայն դումայական շրջաններում խօսւում է, որ քանի կառավարական շրջաններում հարց է բարձրացված լիակատար ներումն տալու դատապարտված պատգամաւորներին, ուստի և շատ հնարաւոր է, որ նրանք վերադառնան Տաւրիկեան պալատը։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարգադրել է, որպէսզի հրէական ազատ տեղերի բացակայութեան պատճառով՝ հրէաներին բարձր կրթական հաստատութիւններում ընդունելու ժամանակ անջատվեն նրանք, որոնք ներկայ ժամանակի հանգամանքներով արժանի են առանձին ուշադրութեան։ Այդ պատճառով համալսարաններում և այլ բարձր կրթարաններում առաջին հերթին կը դրվեն իբրև ուսանողներ այն հրէաները, որոնք իրանք մասնակցել են ներկայ պատերազմում թշնամու դէմ և յետոյ վիրաւորվել և կամ հիւանդութեան պատճառով ազատվել են զինուորական ծառայութիւնից, նաև այն հրէաների զաւակները, որոնք կանչված են գործող զօրաբանակը։ Մնացած ազատ տեղերում ընդունվելու են այն հրէաները, որոնց ընտանիքների անդամները, գտնվելով պատերազմում, ստացել են շքանշաններ կամ սպանվել են, կամ թէ վիրաւորվել են։

◆ Պետրօգրադում կայացաւ առաջադիմականների և սահմ.-ռամկ. ֆրակցիաների միացեալ նիստը։ Առաջադիմականների ֆրակցիան որոշեց, որ նրա վերաբերմունքը դէպի կառավարութիւնը, չը նայած առանձին մինիստրների փոփոխութեան, պէտք է մնայ նախկինը։ Սահմ.-ռամկավարները որոշեցին միջնորդել, որպէսզի Դումայի նստաշրջանը երկարատև լինի և որպէսզի Դումայի առաջին նիստում խօսելու իրաւունք տրվի բոլոր խմբակների ներկայացուցիչներին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Ինչպէս յայտնի է, վրաց բարեգործական ընկերութեանը կից վերջերս հաստատվեց առանձին իրաւաբանական մասնաժողով՝ օգնելու համար այն աջարացիներին, որոնք կը յանձնվեն դատարանին Թիւրքերի առաջխաղացման ժամանակ Աջարիայի մի քանի տեղերում աջակցութիւն ցոյց տալու մեղադրանքով։ Այս օրերս մտադրութիւն կար այդ մասնաժողովի անդամներից մի քանիսին ուղարկել Աջարիա։ Այժմ տեղեկութիւն է ստացվել, որ այդ առաքումը հարկաւոր չէ, որովհետև տեղական իրաւաբանները լիովին ստանձնել են նախնական աշխատանքները։ Ինչպէս լսել է «К. Сл.»-ն, դատական հաստատութիւններում աջարացիների գործը քննելու ժամանակ հրաւիրելու են յայտնի իրաւագէտներ ինչպէս Թիֆլիսից, այնպէս և կենտրոնական Ռուսաստանից։

ՄԱՄՈՒԼ

Վանի շրջանի վարչութիւնը հայերին յանձնելն առիթ է տալիս Վանի մէջ լոյս տեսնող «Վան-Տոսպ» թերթին յունիսի 16-ի իր համարում արձագանք տալ հայ ազգաբնակութեան խնդակցութեանը և ողջոյն ուղղելու նորակազմ կառավարութեանը։

Առիթ բռնելով այդ միակ մխիթարական իրողութիւնը՝ մեր արիւնոտ պայքարի ծանր օրերում, թերթը իր արդար կշտամբանքներն է ուղղում այն օտարազգի քննադատներին, որոնք կանխօրէն հանդէս եկան քաղաքակիրթ աշխարհի առաջ սևացնելու հայ ազգը իբրև իր ազգային նկարագրի լաւ գծերը կորցրած մի ժողովուրդ։ Բարեբաղդաբար այս համաեւրոպական պատերազմը եկաւ ջրելու այդպիսիների անարդար դատավճիռը։

«Նայեցէք հայկական այն նոր սերունդի վրայ,—ասում է թերթը,—որ բաղդ ունեցած է մահմեդական միջավայրէն հեռու, թէկուզ իր հայրենիքէն շատ հեռու, օտար հորիզոնի տակ ծնիլ, դաստիարակուիլ և ապրիլ։ Շատ կարճ ժամանակի՝ և տարբեր միջավայրներու նպաստաւոր պայմաններու մէջ, հայ ժողովուրդը ցոյց տուաւ իր թագուն, չգնահատուած արժանիքները, յաջողեցաւ հետզհետէ փոխել տալ իր մասին արմատացած ծուռ համոզումները, ստեղծեց իր շուրջ քաղաքակիրթ մարդկութեան հետաքրքրութեան և համակրանքի նոր հոսանք մը։ Ատոր ապացոյցն այժմ մեր աչքի առջևն է։ Վերջին տարիներու ընթացքին, և մանաւանդ այս ներկայ համեւրոպական պատերազմին համընթաց, քաղաքակիրթ ազգերու մէջ մղուած ստացաւ այն գաղափարը, թէ հայը ոչ թէ միայն արժանի է աջակցութեան, թիւրք բռնակալական լուծէն ազատուելու համար, այլ նոյնիսկ կարելի է ստեղծել հայկական հովանաւորուած ինքնավարութիւն մը։ Եւ մենք համոզուած ենք, որ եթէ նոյն Եւրոպայի դիւանագիտական քաղաքական պայմաններու նոր դասաւորումները թոյլ տան, հայը պիտի արժանանայ այդ պատուին, աւելի կամ նուազ լայն սահմաններու մէջ։

Այնուհետև, խօսելով նոր կառավարութեան շուրջը տիրող յոռետես ու լաւատես հայեացքների մասին, մեր ներքին կեանքի անհրաժեշտութեան մասին, «Վան-Տոսպ» ամփոփում է.

Մենք յուսահատ չենք մեր ժողովուրդի բարքերու նկատմամբ, և մեր մանուկ կառավարութեան մասին հաւատք ունինք։ Եւ եթէ մենք սխալինք մեր լաւատեսութեան մէջ, այն ատեն պատճառները պիտի փնտռենք ոչ թէ հասարակութեան կամ ազգային կառավարութեան գաղափարին մէջ, այլ կառավարութեան գլուխ գտնուողներու իւրաքանչիւր քայլին մէջ։

Միակ մտահոգութիւնը, որ պատճառում է թերթին, դա այն հարցն է, թէ «ունինք կառավարութիւն մը, որու ղեկավարները ունենան իրենց կոչումին գիտակցութիւնը, գործելու կամք և գործունէութեան շատակ ուղեգիծ մը»։

Պատասխանել այդ հարցին կարող է ապագան։

*

Ըստ երևոյթին իրադարձութիւնը մեր կեանքում յաջորդում է թաւալգլոր։

Տասն օր է անցել ողջոյնը տալու օրից, և ահա նոյն թերթը իր յունիսի 26-ի համարում զետեղում է «Սթափեցէք քանի ուշ չէ» խորագրով մի նոր առաջնորդող, որից երևում է, թէ նորակազմ կառավարութիւնը, իր «կուսակցական ամենատգեղ խտրականութեամբ», արդէն հիասթափութիւն է առաջ բերել երիտասարդութեան մէջ։

Մեր մէջ, ուր անհամեմատ աւելի քիչ է քաղաքացիական դաստիարակութիւն և ընդհանուր պէտքերուն մասնակցելու ինքնաբեր կամեցողութիւն, մեր մէջ՝ ուր կուսակցական հակառակութիւններ գոյութիւն ունին տարիներով և իրենց հետքը դրոշմած են և պիտի դրոշմեն ժողովուրդի մտածելակերպին վրայ, մեր մէջ վերջապէս՝ երբ գործունէութեան նոր ասպարէզ մը, անծանօթ գետին մը կը բացուի և պէտք կայ մեծ աշխատանքներու, մեծ բարեացակամութեան, մեծ խելքի, օրուան կառավարութիւնը փոխանակ վերը յիշուած օրինակներուն պէս մօտենալու ժողովուրդին, փոխանակ իմաստուն միջոցներով զայն կապելու իր հետ և մղելու դէպի ընդհանուր գործը, կարծես ընդհակառակն կարելին կընէ հետզհետէ աւելի հեռանալու անկէ, աւելի շրջապատուելու չինական պարիսպներով, ստեղծելու մեկուսացած բիւրոկրատիա մը և ժողովուրդը դնելու կրաւորական, կամքէ և նախաձեռնութենէ զուրկ մասայի դրութեան մէջ։

Անցնող երեսնօրեայ կռիւներու մէջ Վանի հայութիւնը մոռցաւ իր ներքին պայքարները։ Զիրար քննադատող կուսակցութիւնները մէկզի դրին ամեն վէճ, ամեն նկատում, և իբրև մէկ անձ մը հաւաքուած եղբայրներ՝ ձեռք ձեռքի տուին ընդհանուր թշնամիի դէմ. և այդ կերպով էր միայն որ այդ յիշատակելի ամսուան ընթացքին Վանի հայութիւնը այնքան ուժով եղաւ, այնքան յամառ պայքարող և այնքան յաջող՝ երկարատև և անհաւասար կռուին մէջ։ Բայց խեղճն որ անցան տագնապի օրերը, այն անձերը, որոց յանձնուեցաւ տեղական կառավարութեան գործը, մոռցան երեկուայ գեղեցիկ դասը, ստեղծեցին կուսակցական օլիգարշը մը և թոյլ տուին, որ իրաւացի դժգոհութիւններ ուզածնուն չափ կազմուին, ծովանան և դառն զգացումներով բաժնեն իրարմէ սրտեր ու կամքեր, այնպիսի ատեն մը, երբ վասպուրականցին, և իրմով հայութիւնը, կապրի իր ամենէն ծանր, բաղդորոշ վայրկեանը և պէտք ունի իր բոլոր տրամադրելի ուժերու միահամուռ, գործօն աշխատանքին։ Արդի կառավարութեան միակ ուժը, միակ յենարանը իր ետև կեցած ժողովուրդն է. առանց անոր գործակցութեան, կառավարութիւնը ոչինչ կարժէ, ոչինչ կրնայ ընել, և սակայն զայն գործակցել տալու համար պէտք է միջոցներ, նպաստաւոր պայմաններ ստեղծել, գրաւել անոր համակրութիւնը, մասնակից ընել զինք տրուելիք որոշումներուն և այդպիսով դուրս հանել զինքը այն անտարբեր վիճակէն, որ այս կերպ ճգնաժամային օրերուն մէջ մահացու է պարզապէս։ Ո՞րը սակայն օրուան կառավարութիւնը դիմեց լայն խորհրդակցութիւններու, որ լաւագոյն միջոցներ են ժողովրդական ընդարձակ գործակցութիւն մը ապահովելու համար. ո՞րը նոյն իսկ նահանգային խորհուրդ կոչուածը կանոնաւոր և լուրջ ժողովներու նիւթ ըրաւ ընթացիկ խնդիրները։ Իրողութիւն է, որ մինչև հիմա կառավարական որոշումներու մեծագոյն մասը դուրս չեն եկած քիչ ու շատ կանոնաւոր խորհրդակցութիւններէ, այլ կրած են անհատական, հում, քմահաճ հանգամանք մը։ Ո՞րը կառավարութիւնը փորձեց լայնախոհ ընթացքով մի ներքին ուժեղ համակամութիւն ստեղծել այս ճգնաժամային օրերու մէջ. ընդհակառակն առաջին օրէն իսկ՝ հազար ու մէկ մանր ու խոշոր առիթներու մէջ՝ երևան եկաւ կուսակցական ամենատգեղ խտրականութիւն, որ հիասթափ ըրաւ երիտասարդութիւնը և զայն մղեց անտարբեր, նոյն իսկ թշնամական դիրքի մէջ։ Մենք կրնանք յիշել այս մասին բազմաթիւ փաստեր, բայց առայժմ կը լռենք։

Իբրև հայ և իբրև վանեցի՝ մեր սիրտը կարիւնի, երբ կը տեսնենք, որ նոյնիսկ այս կերպ օրերու մէջ մեր գործիչներուն կը պակսի անհրաժեշտ հեռատեսութիւնն ու լայնամտութիւնը, և այդ կերպով կը ստեղծուի ներքին քաոս, անտարբերութիւն, թշնամական տրամադրութիւններ։ Երբ կը տեսնենք, որ մեր բաղձանքներն ու ակնկալութիւնները զոհ կերթան ճղճիմ նկատումներու։ Մեր ամենաջերմ փափաքն էր, որ Վանի տեղական կառավարութիւնը հասկնար իր սխալը, ըմբռնէր պատմական այս վայրկեանին նշանակութիւնը, մօտենար ժողովրդին և վերջ դնելով ամեն կերպ պարշահատ թայֆայականութիւններու և անարդարութիւն- [illegible] կառավարութեան իր ահագին պարտականութիւններու կատարման մէջ։

Այլապէս մեր վիճակը աւելի քան ողբալի է։

Շատ ցաւալի է, եթէ երեսնօրեայ ժողովրդական պայքարի միջից պարզերես դուրս եկած գործիչները, տագնապի օրերը անցնելուց յետոյ, կառավարութեան ղեկը ստանձնելով՝ անընդունակ են գտնվում պահպանելու համերաշխութիւնը ժողովրդի մէջ և նրա գոյութիւնը ապահովելու համար սկսած շինարար աշխատանքը պատւով պսակելու։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 15 յուլիսի

Մի անգամ ևս դիմում եմ իմ պիէսները բոլոր հայաբնակ վայրերում ներկայացնող պարոններին ու տիկիններին և խնդրում դադարել վերջապէս ձրիաբար շահագործելու իմ գրական աշխատանքը։

Խնդրում եմ նաև Բարեգ. Ընկերութեան տեղական ճիւղերի վարչութիւններին, ուսումնարանական հոգաբարձութիւններին և թատերասէրներին չը դիմել ինձ պիէսների ներկայացման թոյլտուութիւնը խնդրելու։ Ես ոչ օքի չեմ արգելում իմ պիէսները ներկայացնելու, բայց պահանջում եմ, որ իւրաքանչիւր ներկայացնող խումբ կամ մարմին կատարէ պիէսներիս ճակատին տպված պայմանը, այն է՝ վճարել ինձ ամեն մի ներկայացման ամբողջ հասոյթից (воловой сборъ) 10%։ Այս պայմանն անխախտելի է թէ դերասանական և թէ բարեգործական ներկայացման համար։

Ցաւով եմ, որ, վերջապէս, կը հասկացվի, որ գրական աշխատանքով անվարձ օգտվելը հաւասար է ուրիշի սեփականութիւնը սեփականացնելուն, ուրեմն և դատապարտելի թէ օրինական և թէ բարոյական տեսակէտից։

Իմ հասցէն՝ Тифлисъ, Ширванзадэ, Бебутовская, 60.

Շիրվանզադէ

—

Թիֆլիս, 15 յուլիսի

«Մշակի» երէկվայ № 152-ում «Մի առաջարկութեան առիթով» (պէտք է լինէր «Մի առարկութեան առիթով») իմ յօդուածում սպրդել են մի շարք տպագրական սխալներ։ Որովհետև նրանցից մէկը կարող է ընթերցողին տարակուսանքի մէջ ձգել կամ սխալ մեկնութիւնների տեղիք տալ, ուստի ես հարկ եմ համարում բացատրել։

Ինչպէս գիտէ ընթերցողը, մեր մի շարք յօդուածներում հրաւիրելով հայ հասարակութիւնը, գլխաւորապէս ունևոր դասակարգը, նիւթապէս աջակցել կամաւորական շարժումին, մեր վերջին՝ երէկվայ յօդուածում ասել ենք. «Ասում են նոյնպէս, որ փող չեն տալիս մեր հարուստները, որովհետև կամաւորական գործի կազմակերպողները կուսակցական են»։ Գտնելով որ այդ առարկութիւնը ոչ մի քննադատութեան չէ դիմանում և որ այսպիսի մի ճակատագրական մոմենտում ամօթ և անպատուաբեր է կուսակցութեան հարց առաջ բերելը, մենք գրել ենք այսպէս՝ «Հայ ժողովրդի զաւակները՝ դաշնակցականն ու առաջադիմականը, սոց.-դեմօկրատը, անկուսակցականն ու հնչակեանը գնում են միասին մեռնելու, գընում են միասին զոհվելու, հայրենիքի պատիւը միասին պաշտպանելու»։

Իսկ տպագրված է այսպէս՝ «Հայ ժողովրդի զաւակները, սոց.-դեմօկրատներն ու անկուսակցականները գնում են միասին մեռնելու» և այլն։

Կարելի է կարծել, որ ես ուզում եմ ասել, թէ մեր կամաւորները միմիայն սոց.-դեմօկր. և անկուսակցականներ են, և ենթադրել, որ ես կամ անտեղեակ եմ իրերի դրութեանը, կամ գիտակցաբար լռութեան եմ տալիս դաշնակցական կամ հնչակեան կուսակցութիւններին պատկանող կամաւորների մասին։

Սխալ մեկնութիւնների առիթ չը տալու համար շտապում եմ պարզել այդ տպագրական սխալը։

Սոֆիա Դանիէլ-Բէկ

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 5 ր. երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 46 ր. առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր. առաւ.

174. 0—33

ПРИ ГОНОРРЕѢ въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ „АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма подделокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(Ե. Կ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւնդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—119

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բեչէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրեպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, բեչէպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՈՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց չուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ անպէտն դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԱՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ նկարի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երկու հետևեալ գրքերը. 1) «Նկարչական չալվարը» ծիծաղաշարժ վօղըվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Мелипинскому фельдшеру А. Г. Есаяецу.
(Ե.Կ.) 311. 100—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետևեալ հրատարակութիւնները.
1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . . 4 ր.
3) «ՀԱՅՑԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
4) «ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկպ. Գ. Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն և անդամազննութիւն . 1 ր.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.
Ցիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց խսկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշուին է ճանապարհածախսը։
1. 0—3

ԿԱՊԱԼՈՎ
տալիս ենք ամբողջ
քարվանսարան, որ գտնվում է Սիօնի փողոցի վրա, № 1. Պայմանների մասին տեղեկանալ միևնոյն տեղ Մայսուրեանից և Խօջամիրօեանից։
471 1—1

Աֆանասևսկի Պօստիկ
գիւղի հայոց եկ.-ծխ. միդասեան ուսումնարանի համար հարկաւոր է մի փորձված ճեմարանաւարտ կամ ներսիսեանաւարտ
ցենզ ունեցող
ՈՒՍՈՒՑԻՉ,
որ ծանօթ լինի եկեղեցական երգեցողութեան, որպէս զի կարող լինի պատրաստել երգեցիկ խումբ պատարագի օրերում երգելու իր ղեկավարութեամբ։ Ռոճիկը 375 ր., սենեակ, վառելիք, լուսաւորութիւն և ճանապարհածախս՝ 15 րուբլի։ Ցանկացողները թող շտապեն վաղօրօք յայտնել։
Մեր հասցէն՝ Черезъ Горячій Ключъ (Куб. обл., Безымянной волости), сел. Афанасьевскій Постикъ, арм. церк.-приходскому Попечительству. 465. 3—3

Խաչատուր Աւոաքելեանի հրատարակութեամբ օգոստոս ամսին լոյս կը տեսնի
„ՆՈՐ ՑՈԼՔԵՐ" №1
Պատանիների և սկսնակ գրողների ամեն տեսակ գրուածքների ժողովածու։
Նիւթեր ընդունվում են՝ Тифлисъ, Армянск. Дух. Нерсисянъ Семинарія Т. Теръ-Арутюняну.
(Կ.) 472. 2—1

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Ուզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար ինչպէս ԴԻԶԷԼ շարժիչներ (մոտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկօմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(Ե.Կ.) 551. 150—114

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.